



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳԼԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

24 ՄԱՐՏԻ 2021 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 8 անդամներ:

Բացակա էին՝ Արտակ Գևորգյանը, Վահե Լևոնյանը, Գեղամ Վարդանյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Համայնքի ղեկավարի տեղակալ Վարդան Վարդանյանը, համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Նաիրի Հովհաննիսյանը, առաջատար մասնագետ Սամվել Օրդոյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Արմեն Մովսիսյանը:

**Նիստն արձանագրում էր համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝
Մարինե Հովհաննիսյանը:**

Լսեցին.

**ԳԼԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 3 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Ձեկ. ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Գլաձոր համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 24-ի թիվ 3 հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1. Գլաձոր համայնքի ավագանու 2021 թվականի թիվ 3 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Գլաձոր համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:

3. Գլաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 2.10348 հա էներգետիկայի հողը մրցութային կարգով կառուցապատման տրամադրելու համար թույլտվություն տալու մասին:

4. Գլաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից մրցութային կարգով վարձակալության տրամադրելու համար թույլտվություն տալու մասին:

5. Գլաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտավայրերից պարզ գրավոր ձևով վարձակալության տրամադրելու համար թույլտվություն տալու մասին:

6. Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.178 հա բնակավայրերի նշանակության այլ հողը աճուրդով օտարելու համար թույլտվություն տալու մասին:

7. Գլաձոր համայնքի ավագանու 2021 թվականի փետրվարի 22-ի թիվ 26-Ա որոշման բովանդակությունը նոր խմբագրությամբ շարադրելու մասին:

8. Գլաձոր համայնքի ավագանու 2021 թվականի փետրվարի 22-ի թիվ 16 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

9. Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, քաղաքացի Ազնիվ Էսաչատուրի Բարսեղյանին սեփականության իրավունքով պատկանող 0.044 հա հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

10. Համայնքի տարածքում սանիտարական հատում իրականացնելու համար <<Գլաձոր համայնքային տնտեսություն>> ՀՈԱԿ-ին թույլտվություն տալու մասին:

11. Կամավոր խնդրի լուծման իրականացմանը համաձայնություն տալու և ֆինանսական օգնություն տրամադրելու մասին:

12. Նվիրատվությամբ գույք ընդունելու և Գլաձոր համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարվող փոփոխությունը հաստատելու մասին:

13. Վերնաշեն բնակավայրում գտնվող մատուռի բարեկարգման համար ցեմենտ տրամադրելու մասին:

Կողմ-8	Դեմ-0	Ձեռնպահ-0
--------	-------	-----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 29/

Լսեցին.

**ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Ձեկ. ՆԱԻՐԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

Դեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Հայաստանի